

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԾՁԲ-21-2/2-1**

ք. Երևան

03.06.2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ա. Սահակյանի, ով գործում է ՀՀ պաշտպանության նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գենկոն» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Հ. Գյուրջյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին և տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում և էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 84 660 000 (ութսունչորս միլիոն վեց հարյուր վաթսույն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 20.12.2021թ.:

Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝  $V_9 = U_9 / L_9 \times D \times P$ , որտեղ՝

$V_9$ -ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

#### 1-ին՝ չափաբաժին

$U_9$ -ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է՝ 254 100 ՀՀ դրամ.

$L_9$ -ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է՝ 273 340 ՀՀ դրամ.

$U_9 / L_9$ - բանաձևով սահմանված գործակից՝ 0.929

$D$ -ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է՝ հավելված 1.1

$P$ -ն մատուցված ծառայության քանակն է:

#### 2-րդ՝ չափաբաժին

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է՝ 347 650 ՀՀ դրամ.

ԼԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է՝ 373 860 ՀՀ դրամ.

ՄԳ/ԼԳ- բանաձևով սահմանված գործակից՝ 0.929

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է՝ հավելված 1.2

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

### 3-րդ՝ չափաբաժին

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է՝ 232 400 ՀՀ դրամ.

ԼԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է՝ 249 900 ՀՀ դրամ.

ՄԳ/ԼԳ- բանաձևով սահմանված գործակից՝ 0.929

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է՝ հավելված 1.3

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

### 4-րդ՝ չափաբաժին

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է՝ 2 840 000 ՀՀ դրամ.

ԼԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է՝ 3 044 545 ՀՀ դրամ.

ՄԳ/ԼԳ- բանաձևով սահմանված գործակից՝ 0.932

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է՝ հավելված 1.4

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, քրիեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքում: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ պատրաստության գլխավոր վարչությունը:

### 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱԿԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


#### ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն  
ք. Երևան Բազրևանդի 5  
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն  
Հ/Կ 900011144079  
ՀՎՀՀ 02522157  
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

#### ԿԱՏԱՐՈՂ

«Գենկոն» ՍՊԸ  
ՀՀ, Արարատի մարզ, գ. Մասիս  
Բ. Մարտիրոսյանի փ. 23 տ.  
«Ամերիա բանկ» ՓԲԸ  
Հ/Կ 1570072889520100  
ՀՎՀՀ 04237792  
Տնօրեն

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ



ԳՅՈՒՐՋՅԱՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ ԳՆԱՆ ԺԱՍՆԱԿԱՑՈՒՅՑ՝

Հ/Հ	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Առավելագույն գումար /դրամ/	Գնման ժամանակացույց
1	Ամբարձիչների նորոգում (Թիրախային ամբարձիչ ՈՒՄՈՒ-Ս-127-ի նորոգում)	Թիրախային ամբարձիչ ՈՒՄՈՒ-Ս-127-ի փաստացի անսարքությունների նորոգում և անսարք դետալների փոխարինում:	25000000	
2	Ամբարձիչների նորոգում (Թիրախային ամբարձիչ ՈՒՄՈՒ S-127 ի նորոգում)	Թիրախային ամբարձիչ ՈՒՄՈՒ S-127 ի փաստացի անսարքությունների նորոգում և անսարք դետալների փոխարինում:	10000000	2021թ-ի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների ընթացքում ըստ ՊԳԿ հայտերի, բայց ոչ ոչ քան 10.12.2021թ.
3	Ամբարձիչների նորոգում (Թիրախային ամբարձիչներ ՌՀԿ նորոգում)	Թիրախային ամբարձիչներ ՌՀԿ ի փաստացի անսարքությունների նորոգում և անսարք դետալների փոխարինում:	29660000	
4	Շարժական կայանքների նորոգում (Շարժական կայանքների նորոգում)	Շարժական կայանքների փաստացի անսարքությունների նորոգում և անսարք դետալների փոխարինում:	20000000	

Ծանոթություն:

Նորոգման ընթացքում փոխարինվող սարքավորումները (դետալները) պետք է լինեն նոր և չօգտագործված, ձեռք են բերվում նորոգումն իրականացնող կազմակերպության կողմից: Նորոգումն իրականացվում է ՁՈՒ ՊԳԿ հայտերի և փաստացի պահանջարկի համաձայն, կազմակերպության արտադրամասում, բացառությամբ 4-րդ չափաբաժնով ներկայացված <<Շարժական կայանքների նորոգում>> անվանատողի, որը իրականացվելու է գործարանների:

Հավելված 1.1

Ամբարձիչների նորոգում (Թիրախային ամբարձիչ ՈՒՄՈՒ-Ս-127-ի նորոգում)			
Այդ թվում՝			
Հ/հ	Անվանումը	Չ/մ	Միավորի գին/դրամ/
1	ՄՅ 255, 12V, 20W շարժիչի փոխարինում	հատ	11000
2	ՄՅ 255, 12V, 20W շարժիչի նորոգում	հատ	1100
3	ՄՅ 255, 12V, 20W շարժիչի կցաշուրթի փոխարինում	հատ	1320
4	SAV1340LRD շարժիչի փոխարինում	հատ	18700
5	SAV1340LRD շարժիչի նորոգում	հատ	3300
6	SAV1340LRD շարժիչի կցաշուրթի փոխարինում	հատ	1100
7	Փոխանցման տուփի մեկ ատամնանիվի փոխարինում	հատ	7700
8	Փոխանցման տուփի մեկ ատանցքակալի փոխարինում	հատ	2200
9	Փոխանցման տուփի մեկ հեղույսի փոխարինում	հատ	550
10	Ապահովիչի բնիկի փոխարինում	հատ	1870
11	Ապահովիչի փոխարինում	հատ	330
12	Սնուցման հանգույցի փոխարինում	հատ	2970
13	Հետադարձ ինժեռնացիայի և գիշերային նմանակման հանգույցի փոխարինում	հատ	2750

14	Խոցման շղթայի հանգույցի փոխարինում	հատ	2750
15	Հեռակառավարվող և տեղային ռեժիմների անջատիչի (տումրլու) փոխարինում	հատ	3080
16	Խոցման շղթայի անջատիչի (տումրլու) փոխարինում	հատ	2200
17	Իրանի մեխանիկանան վնասվածքի վերանորոգում	հատ	1760
18	Էլեկտրատեղակայման աշխատանքներ հարթ մակերեսի համար 1սմ կարի հաշվարկով	սմ	550
19	Էլեկտրատեղակայման աշխատանքներ խողովակների համար 1սմ կարի հաշվարկով	սմ	770
20	Իրանի ներկում	հատ	2200
21	Ամբարձիչի կափարիչի փոխարինում	հատ	3300
22	Թիրախը բարձրացնող (իջեցնող) մեխանիզմի թևիկի փոխարինում	հատ	2200
23	Թիրախը բարձրացնող (իջեցնող) մեխանիզմի ամրացման հեղույսի փոխարինում	հատ	550
24	Թիրախը սեղմող մեխանիզմի սեղմակի փոխարինում	հատ	1100
25	Թիրախը սեղմող մեխանիզմի զսպանակի փոխարինում	հատ	330
26	Շուտովիկ շարժաթևային մեխանիզմի թևիկի փոխարինում	հատ	2200
27	Շուտովիկ շարժաթևային մեխանիզմի կիսալուսնի փոխարինում	հատ	1650
28	Շուտովիկ շարժաթևային մեխանիզմի ականոցի փոխարինում	հատ	1100
29	Ամբարձիչի տանող ատամնանիվի փոխարինում	հատ	15400
30	Իմպուլսային (սնուցման ) բլոկի փոխարինում	հատ	6600
31	Էլեկտրական բլոկի փոխարինում	հատ	22000
32	ԴՑ16 դիողի փոխարինում	հատ	1540
33	ՈՒՍ-22 ռելեի փոխարինում	հատ	3850
34	Ռելե 24վ փոխարինում	հատ	2860
35	ԿԴ209 դիողի փոխարինում	հատ	1980
36	1000մկՖ կոնդենսատորի փոխարինում	հատ	1320
37	470մկՖ կոնդենսատորի փոխարինում	հատ	1100
38	220մկՖ կոնդենսատորի փոխարինում	հատ	1100
39	47մկՖ կոնդենսատորի փոխարինում	հատ	1100
40	0.22մկՖ կոնդենսատորի փոխարինում	հատ	880
41	2.2մկՖ կոնդենսատորի փոխարինում	հատ	1100
42	ԿՈՒ202Լ տիրիստորի փոխարինում	հատ	2750
43	IN 4007 դիողի փոխարինում	հատ	1100
44	IRF 830 տրանզիստորի փոխարինում	հատ	2200
45	IRF 840 տրանզիստորի փոխարինում	հատ	2200
46	VT 151 տիրիստորի փոխարինում	հատ	1870
47	13007 տրանզիստորի փոխարինում	հատ	1870
48	13005 տրանզիստորի փոխարինում	հատ	880
49	Կերամիկական դիմադրության փոխարինում	հատ	2200
50	Մեկ հաղորդալարի փոխարինում	հատ	550
51	Տպագիր պլատայի ուղղում	հատ	330
52	Էլեկտրոնային տրանսֆորմատորի փոխարինում ' ՓԻՔ 123 509	հատ	3850
53	Միկրոանջատիչի փոխարինում	հատ	1100
54	Միկրոանջատիչի կալունակի փոխարինում	հատ	1100
55	Դիմադրության փոխարինում	հատ	880
56	Կցորդիչի (խաչուկ) փոխարինում	հատ	3300
57	Փոխանցման տուփի առաջնային լիսեռի փոխարինում	հատ	5500
58	Թիրախը բարձրացնող (իջեցնող) մեխանիզմի զսպանակի փոխարինում	հատ	1650
59	ՔՊ-14 30 հանգույցի փոխարինում	հատ	2200
60	ՄՅ 255, 12V, 20W շարժիչի մեկ ածուխի փոխարինում	հատ	1100
61	ՄՅ 255, 12V, 20W շարժիչի ստատորի փաթույթի փոխարինում	հատ	2200
62	ՄՅ 255, 12V, 20W շարժիչի ռոտորի փոխարինում	հատ	2420
63	SAV1340LRD շարժիչի ստատորի փաթույթի փոխարինում	հատ	4950

64	SAVI340LRD շարժիչի ոտտորի փոխարինում	հատ	4180
65	SAVI340LRD շարժիչի տանող առամանսիվի փոխարինում	հատ	15400
66	Իմպուլսային (սնուցման ) բլոկի տրանսֆորմատորի փոխարինում	հատ	3300
67	Իմպուլսային (սնուցման ) բլոկի տպագիր պլատայի փոխարինում	հատ	1100
68	ՄՊ 3-1 անջատիչի փոխարինում	հատ	2200
69	ՄՊ 2102 անջատիչի փոխարինում	հատ	3300
70	MSW - 02A անջատիչի փոխարինում	հատ	2200
71	SAVI340LRD շարժիչի փոքր առամանսիվի փոխարինում	հատ	7000
72	Փոխանցման տուփի մեկ լիսեռի փոխարինում	հատ	5000
73	SAVI340LRD շարժիչի ձգման հենարանի փոխարինում	հատ	10000
74	0,68մկՖ 630 Վ կոնդենսատորի փոխարինում	հատ	1500
75	0,22մկՖ 630 Վ կոնդենսատորի փոխարինում	հատ	1500
76	22մկՖ կոնդենսատորի փոխարինում	հատ	1500
77	1N 5397 դիոդի փոխարինում	հատ	1500
78	15 կՕհմ 2Վատտ դիմադրության փոխարինում	հատ	1500
79	15 Օհմ 2Վատտ դիմադրության փոխարինում	հատ	1500
80	15 ՄՕհմ դիմադրության փոխարինում	հատ	1000
81	Թիրախը բարձրացնող (իջեցնող) մեխանիզմի լիսեռի փոխարինում	հատ	9000
82	ԿՑ 175 ստաբիլիտրոնի փոխարինում	հատ	1500
83	ՄՊ 3-1 անջատիչի ձգման հենարանի փոխարինում	հատ	2000
84	ՄՊ 2102 անջատիչի կալոմակի փոխարինում	հատ	3500
85	ԿԴ 203 դիոդի փոխարինում	հատ	2500
86	Էլ. բլոկի տակդիրի փոխարինում	հատ	2000
87	ՓԻՔ 12Ց 509 ծրագրավորում	հատ	1500
	Ընդամենը՝		273340

Հավելված 1.2

Ամբարձիչների նորոգում (Թիրախային ամբարձիչ ՈՒՄՈՒ S 127 ի նորոգում)			
Այդ թվում՝			
Հ/հ	Անվանումը	Չ/մ	Միավորի գին/դրամ/
1	PA250 շարժիչի փոխարինում	հատ	44000
2	PA250 շարժիչի նորոգում	հատ	6600
3	PA250 շարժիչի կցաշուրթի փոխարինում	հատ	3300
4	ՄՊ062 շարժիչի փոխարինում	հատ	30800
5	ՄՊ062 շարժիչի նորոգում	հատ	4400
6	ՄՊ062 շարժիչի կցաշուրթի փոխարինում	հատ	3850
7	CBB 60 կոնդենսատորի փոխարինում	հատ	2970
8	Փոխանցման տուփի մեկ առամանսիվի փոխարինում	հատ	1980
9	Փոխանցման տուփի մեկ առանցքակալի փոխարինում	հատ	1760
10	Փոխանցման տուփի մեկ հեղույսի փոխարինում	հատ	660
11	Ապահովիչի բնիկի փոխարինում	հատ	1980
12	Ապահովիչի փոխարինում	հատ	330
13	Սնուցման հանգույցի փոխարինում	հատ	2970
14	Հետադարձ ինֆորմացիայի և զիշերային նմանակման հանգույցի փոխարինում	հատ	2750
15	Խոցման շղթայի հանգույցի փոխարինում	հատ	2750
16	Հեռակառավարվող և տեղային ռեժիմների անջատիչի (տումբլեռ) փոխարինում	հատ	3080
17	Խոցման շղթայի անջատիչի (տումբլեռ) փոխարինում	հատ	2200
18	Իրանի մեխանիկական վեասվաճքի վերանորոգում	հատ	2200
19	Էլեկտրաեռակցման աշխատանքներ հարթ մակերեսի համար 1սմ կարի հաշվարկով	սմ	550

20	Էլեկտրատեղակցման աշխատանքներ խողովակների համար 1սմ կարի հաշվարկով	սմ	770
21	Իրանի ներկում	հատ	3080
22	Ամբարձիչի կափարիչի փոխարինում	հատ	5060
23	Թիրախը բարձրացնող (իջեցնող) մեխանիզմի թևիկի փոխարինում	հատ	3300
24	Թիրախը բարձրացնող (իջեցնող) մեխանիզմի ամրացման հեղույսի փոխարինում	հատ	1100
25	Թիրախը սեղմող մեխանիզմի սեղմակի փոխարինում	հատ	1650
26	Թիրախը սեղմող մեխանիզմի զսպանակի փոխարինում	հատ	110
27	Շուտովիկաշարժաթևային մեխանիզմի թևիկի փոխարինում	հատ	5500
28	Շուտովիկաշարժաթևային մեխանիզմի կիսալուննի փոխարինում	հատ	3300
29	Շուտովիկաշարժաթևային մեխանիզմի ականոցի փոխարինում	հատ	1100
30	Էլեկտրական բլոկի փոխարինում	հատ	19800
31	Ղևկավարման բլոկի փոխարինում	հատ	22000
32	Դ816 դիողի փոխարինում	հատ	1980
33	ՌԷՍ 22 ռելեի փոխարինում	հատ	3300
34	Ռելե 24վ փոխարինում	հատ	2860
35	ԿԴ209 դիողի փոխարինում	հատ	1980
36	1000մկֆ կոնդենսատորի փոխարինում	հատ	1320
37	470մկֆ կոնդենսատորի փոխարինում	հատ	550
38	220մկֆ կոնդենսատորի փոխարինում	հատ	1100
39	47մկֆ կոնդենսատորի փոխարինում	հատ	1100
40	0,22մկֆ կոնդենսատորի փոխարինում	հատ	880
41	2,2մկֆ կոնդենսատորի փոխարինում	հատ	1100
42	ԿՌԻ202Ն տիրիստորի փոխարինում	հատ	2750
43	1N 4007 դիողի փոխարինում	հատ	1100
44	VT 151 տիրիստորի փոխարինում	հատ	2200
45	Մեկ հաղորդալարի փոխարինում	հատ	550
46	Տպագիր պլատայի ուղղում	հատ	550
47	Միկրոանջատիչի փոխարինում	հատ	3300
48	Միկրոանջատիչի կալունակի փոխարինում	հատ	550
49	Կցորդիչի (խաչուկ) փոխարինում	հատ	5500
50	BT 138 սիմիստորի փոխարինում	հատ	1980
51	TC 106 սիմիստորի փոխարինում	հատ	1980
52	ՓԻՔ 163622 պրոցեսորի փոխարինում	հատ	4400
53	7805 ստաբիլիզատորի փոխարինում	հատ	2200
54	Ամբարձիչի թևիկի փոխարինում	հատ	1650
55	Թիրախը բարձրացնող (իջեցնող) մեխանիզմի երկար զսպանակի փոխարինում	հատ	4400
56	Թիրախը բարձրացնող (իջեցնող) մեխանիզմի կարճ զսպանակի փոխարինում	հատ	1650
57	PII 14 30 հանգույցի փոխարինում	հատ	2200
58	PA250 շարժիչի արգելակման համակարգի փոխարինում	հատ	6600
59	YII062 շարժիչի մեկ ածուխի փոխարինում	հատ	2750
60	YII062 շարժիչի ստատորի փաթույթի փոխարինում	հատ	14300
61	YII062 շարժիչի ռոտորի փոխարինում	հատ	14300
62	Փոխանցման տուփի առաջնային լիսեռի փոխարինում	հատ	5500
63	ՄՊ 2102 անջատիչի փոխարինում	հատ	3300
64	MSW 02A անջատիչի փոխարինում	հատ	2200
65	Դիմադրության փոխարինում	հատ	880
66	Փոխանցման տուփի մեկ լիսեռի փոխարինում	հատ	6000
67	Փոխանցման տուփի առաջնային լիսեռի հենարանի փոխարինում	հատ	5000
68	Էլ. բլոկի տակդիրի փոխարինում	հատ	2000
69	Թիրախը բարձրացնող (իջեցնող) մեխանիզմի լիսեռի փոխարինում	հատ	14000
70	ԿԴ 203 դիողի փոխարինում	հատ	2500

71	0.47մկֆ 400 Վ կոնդենսատորի փոխարինում	հատ	1500
72	10մկֆ կոնդենսատորի փոխարինում	հատ	1500
73	4 մից ռեզոնատորի փոխարինում	հատ	2500
74	ՄՊ 2102 անջատիչի կալունակի փոխարինում	հատ	4000
75	MSW - 02A անջատիչի կալունակի փոխարինում	հատ	5000
76	Շոտովիկաշարժաթևային մեխանիզմի մեծ կիսալուսնի փոխարինում	հատ	6500
77	Կառավարման բլոկի տուփի փոխարինում	հատ	5000
78	PA250 շարժիչով փոխանցման տուփի մեկ ատամնանիվի փոխարինում	հատ	8000
79	PA250 շարժիչով փոխանցման տուփի առաջնային լիսեռի փոխարինում	հատ	7500
80	Y1062 շարժիչի ձգման հենարանի փոխարինում	հատ	8000
81	Փոխանցման տուփի կափարիչի փոխարինում	հատ	2000
82	Միկրոսխեմայի տակդիրի փոխարինում	հատ	2500
83	16 Ց 622 պրոցեսորի ծրագրավորում Ընդամենը	հատ	1500
			373860

Հավելված 1.3

Ամբարձիչների նորոգում (Թիրախային ամբարձիչ ՌՀԿ նորոգում)			
Այդ թվում՝			
Հ/հ	Անվանումը	Չ/մ	Միավորի գին/դրամ/
1	M3255.12V, 20W շարժիչի փոխարինում	հատ	11000
2	M3255.12V, 20W շարժիչի նորոգում	հատ	110
3	M3 255, 12V, 20W շարժիչի կցաշուրթի փոխարինում	հատ	1650
4	SAV1340LRD շարժիչի փոխարինում	հատ	14300
5	SAV1340LRD շարժիչի նորոգում	հատ	1100
6	SAV1340LRD շարժիչի կցաշուրթի փոխարինում	հատ	110
7	Փոխանցման տուփի մեկատամնանիվի փոխարինում	հատ	3300
8	Փոխանցման տուփի մեկ առանցքակալի փոխարինում	հատ	550
9	Փոխանցման տուփի մեկ հեղույսի փոխարինում	հատ	440
10	Ապահովիչի փոխարինում	հատ	220
11	Ապահովիչի բնիկի փոխարինում	հատ	1100
12	Մուղման հանգույցի լրակազմի փոխարինում (միացման հանգույց, էլ. հաղորդալար)	հատ	2750
13	Գիշերային նմանակման հանգույցի փոխարինում	հատ	2200
14	Գիշերային նմանակման հանգույցի և էլ. հաղորդալարի փոխարինում	հատ	2530
15	Խոցման շղթայի հանգույցի փոխարինում	հատ	1980
16	Խոցման շղթայի հանգույցի և էլ. հաղորդալարի փոխարինում	հատ	2530
17	Հեռակառավարվող և տեղային ռեժիմների անջատիչի (տումր/տ) փոխարինում	հատ	2750
18	Ալեհավաքի փոխարինում	հատ	550
19	Ալեհավաքի բնիկի փոխարինում	հատ	1100
20	Խմբային փոխանցիչի փոխարինում	հատ	2200
21	Իրանի մեխանիկանան վնասվածքի վերանորոգում	հատ	1650
22	Էլեկտրատեղակայման աշխատանքներ հարթ մակերեսի համար 1սմ կարի հաշվարկով	սմ	550
23	Էլեկտրատեղակայման աշխատանքներ խողովակների համար 1սմ կարի հաշվարկով	սմ	770
24	Իրանի ներկում	հատ	1650
25	Ամբարձիչի կափարիչի փոխարինում	հատ	3300
26	Թիրախը բարձրացնող (իջեցնող) մեխանիզմի թևիկի փոխարինում	հատ	2200
27	Թիրախը բարձրացնող (իջեցնող) մեխանիզմի ամրացման հեղույսի փոխարինում	հատ	550

28	Թիրախը սեղմող մեխանիզմի սեղմակի փոխարինում	հատ	1100
29	Թիրախը սեղմող մեխանիզմի զսպանակի փոխարինում	հատ	110
30	Շոտովիկաշարժաթևային մեխանիզմի թևիկի փոխարինում	հատ	2200
31	Շոտովիկաշարժաթևային մեխանիզմի կիսալուսնի փոխարինում	հատ	2200
32	Շոտովիկաշարժաթևային մեխանիզմի ականոցի փոխարինում	հատ	1100
33	Ամբարձիչի տանող առամնանիվի փոխարինում	հատ	14300
34	Ամբարձիչի տակդիրների պատրաստում	հատ	1650
35	Իրանի ներկում	հատ	1650
36	Միկրոանջատիչի փոխարինում	հատ	1100
37	Միկրոանջատիչի կալունակի փոխարինում	հատ	1100
38	Կցորդիչի (խաչուկ) փոխարինում	հատ	550
39	Սարտկոցների իրանի փոխարինում	հատ	550
40	Սեկմարտկոցի փոխարինում (64.4.5 Ա)	հատ	4400
41	Մեկմարտկոցի փոխարինում (124.4.5 Ա)	հատ	8800
42	Էլեկտրական բլոկի փոխարինում	հատ	22000
43	Մեկ հաղորդալարի փոխարինում	հատ	550
44	Դիմադրության փոխարինում	հատ	880
45	ԿՏ 829 Ա տրանզիստորի փոխարինում	հատ	2750
46	7805 ստաբիլիզատորի փոխարինում	հատ	2750
47	4 մհց ռեզոնատորի փոխարինում	հատ	2200
48	46,315 մհց ռեզոնատորի փոխարինում	հատ	2750
49	ՓԻՔ 16F622 պրոցեսորի փոխարինում	հատ	3520
50	455 ԿՀՏ ռեզոնատորի փոխարինում	հատ	2200
51	Ընդունիչ ՄՍ3371 ի փոխարինում	հատ	3520
52	Պեզոֆիլտրի փոխարինում	հատ	2750
53	Ուժեղացուցիչ հաղորդալարի փոխարինում	հատ	770
54	Ուժեղացուցիչ 1407ՈԻԴԼ ի փոխարինում	հատ	3080
55	Էլ.սխեմայի միացման հանգույցի ( P11 14 16 ) փոխարինում	հատ	1650
56	Դիողի փոխարինում	հատ	770
57	Միկրոսխեմայի բնիկի փոխարինում	հատ	2200
58	Ինդուկցիոն կոնտորի փոխարինում	հատ	880
59	Տպագիր պլատայի ուղղում	հատ	330
60	ՄՁ255 շարժիչի 1 ածուխի փոխարինում	հատ	1100
61	ՄՁ255 շարժիչի ռոտորի փոխարինում	հատ	2200
62	ՄՁ255 շարժիչի ստատորի փաթույթի փոխարինում	հատ	2420
63	ՄՁ255 շարժիչի խաչուկի փոխարինում	հատ	3300
64	SAV շարժիչի ռոտորի փոխարինում	հատ	4180
65	SAV շարժիչի ստատորի փաթույթի փոխարինում	հատ	4950
66	Փոխանցման տուփի առաջնային լիսեռի փոխարինում	հատ	5500
67	Սնուցման հանգույցի փոխարինում	հատ	2750
68	Խմբային փոխանցիչի փոխանցատման բռնակի փոխարինում	հատ	880
69	ՄՊ 3-1 անջատիչի փոխարինում	հատ	2200
70	ՄՊ 2102 անջատիչի փոխարինում	հատ	3300
71	ԻՈՖ 540 տրանսպիատորի փոխարինում	հատ	2750
72	16 Ֆ 628 պրոցեսորի փոխարինում	հատ	3520
73	47մկՖ կոնդենսատորի փոխարինում	հատ	1100
74	Չսպանակի փոխարինում	հատ	1650
75	SAV1340LRD շարժիչի փոքր առամնանիվի փոխարինում	հատ	7000
76	SAV1340LRD շարժիչի ձգման հենարանի փոխարինում	հատ	10000
77	ՄՊ 3-1 անջատիչի ձգման հենարանի փոխարինում	հատ	2000
78	ՄՊ 2102 անջատիչի կալունակի փոխարինում	հատ	3500
79	1N 4007 դիողի փոխարինում	հատ	1100
80	Էլ.սխեմայի միացման հանգույցի ( P11 - 14 16 ) մեկ հենարանի փոխարինում	հատ	1000

81	Թիրախը բարձրացնող (իջեցնող) մեխանիզմի լիսեռի փոխարինում	հատ	9000
82	0,068մկֆ կոնդենսատորի փոխարինում	հատ	1000
83	0,022մկֆ կոնդենսատորի փոխարինում	հատ	1000
84	15 փկֆ կոնդենսատորի փոխարինում	հատ	1000
85	27 փկֆ կոնդենսատորի փոխարինում	հատ	1000
86	10 կՕհմ դիմադրության փոխարինում	հատ	1000
87	3,3 կՕհմ դիմադրության փոխարինում	հատ	1000
88	20 կՕհմ դիմադրության փոխարինում	հատ	1000
89	16 Ֆ 628 պրոցեսորի ծրագրավորում	հատ	1500
90	16 Ֆ 622 պրոցեսորի ծրագրավորում	հատ	1500
91	Միացուցիչների հանգույցի ցուցանակի փոխարինում	հատ	5000
	Ընդամենը՝		249900

Հավելված 1.4

Շարժական կայանքների նորոգում (Շարժական կայանքների վերանորոգում)			
Այդ թվում՝			
Հ/հ	Անվանումը	Զ/մ	Միավորի գին/դրամ/
1	22 ԿՎտ,930 պտ/րոպե շարժիչի փոխարինում	հատ	152900
2	7,5 ԿՎտ,1450 պտ/րոպե շարժիչի փոխարինում	հատ	130900
3	5,5 ԿՎտ,1450 պտ/րոպե շարժիչի փոխարինում	հատ	110000
4	3 ԿՎտ,1450 պտ/րոպե շարժիչի փոխարինում	հատ	66000
5	2,2 ԿՎտ,960 պտ/րոպե շարժիչի փոխարինում	հատ	63800
6	1,5 ԿՎտ,950 պտ/րոպե շարժիչի փոխարինում	հատ	33000
7	0,75 ԿՎտ,2750 պտ/րոպե շարժիչի փոխարինում	հատ	17600
8	0,5 ԿՎտ, 2750 պտ/րոպե շարժիչի փոխարինում	հատ	16500
9	Շարժաբերի փոխարինում	հատ	330000
10	Շարժաբերի մեկ փոկանիվի փոխարինում	հատ	17600
11	Հենարանով փոկանիվի փոխարինում	հատ	22000
12	Փոխանցման տուփի նորոգում	հատ	30800
13	Փոխանցման տուփի մեկ ատամնանիվի փոխարինում	հատ	13200
14	Փոխանցմանտուփի մեկ լիսեռի փոխարինում	հատ	11000
15	Փոխանցմանտուփի մեկ առանցքակալի փոխարինում	հատ	3300
16	Հենարանային առանցքակալի փոխարինում	հատ	11000
17	Փոկի փոխարինում	հատ	3300
18	Շարժիչի մեկ փոկանիվի փոխարինում	հատ	5280
19	Էլեկտրական վահանակի փոխարինում	հատ	77000
20	Տումբլեռի փոխարինում	հատ	2750
21	Մագնիսական թողարկիչի փոխարինում	հատ	33000
22	Ավտոմատ անջատիչի փոխարինում	հատ	38500
23	Ռևեռսի պլատայի փոխարինում	հատ	11000
24	Ռևեռսի պլատայի նորոգում	հատ	2200
25	Զերմոռելիչի փոխարինում	հատ	4400
26	Արգելակման համակարգի փոխարինում	հատ	35200
27	Արգելակման համակարգի նորոգում	հատ	7700
28	Սայլակի փոխարինում	հատ	198000
29	Սայլակի նորոգում	հատ	5500
30	Սայլակի մեկ անիվի փոխարինում Փ17սմ	հատ	24200
31	Սայլակի մեկ անիվի փոխարինում Փ19սմ	հատ	33000
32	Սայլակի մեկ անիվի փոխարինում Փ22սմ	հատ	39600
33	Մեկ ռետինե անիվի փոխարինում	հատ	4400
34	Ծայրային անջատիչի փոխարինում	հատ	38500

35	Ծայրային անջատիչի նորոգում	հատ	4400
36	Ծայրային անջատիչի կալունակի փոխարինում	հատ	13200
37	6 մմ ճուպանի փոխարինում, 1 գմ հաշվարկով	գմ	660
38	8 մմ ճուպանի փոխարինում, 1 գմ հաշվարկով	գմ	715
39	10 մմ ճուպանի փոխարինում, 1 գմ հաշվարկով	գմ	770
40	Էլեկտրատակցման աշխատանքներ հարթ մակերեսի համար 1սմ կարի հաշվարկով	սմ	550
41	Էլեկտրատակցման աշխատանքներ խողովակների համար 1սմ կարի հաշվարկով	սմ	770
42	Իրանի ներկում	հատ	6600
43	Ճուպանի ձգվածության մեխանիզմի (կարապիկ) փոխարինում	կ-տ	24200
44	Շարժարերի փոկանիվի Ф36մմ փոխարինում	հատ	16500
45	Շարժարերի փոկանիվի Ф22մմ փոխարինում	հատ	13200
46	Շարժարերի փոկանիվի լիսեռի փոխարինում	հատ	11000
47	Շարժարերի շարժիչի հենարանի փոխարինում	հատ	4400
48	Ճուպանը ուղղորդող մեկ հողովակի փոխարինում	հատ	13200
49	Բաշխման տուփի փոխարինում	հատ	2200
50	Էլեկտրամեխանիկական արգելակման համակարգի փաթույթի փոխարինում 380Վ	հատ	14300
51	Էլեկտրամեխանիկական արգելակման համակարգի փաթույթի փոխարինում 220 Վ	հատ	11000
52	Հիդրավլիկ արգելակման համակարգի հիդրավլիկ մեխանիզմի փոխարինում	հատ	19800
53	Սայլակի մեկանիվի փոխարինում Ф38սմ	հատ	35200
54	Ավտոմատ անջատիչի փոխարինում՝ 16Ա	հատ	26400
55	Ավտոմատ անջատիչի փոխարինում՝ 25Ա	հատ	30800
56	Ավտոմատ անջատիչի փոխարինում՝ 40Ա	հատ	38500
57	Ավտոմատ անջատիչի փոխարինում 63Ա	հատ	49500
58	Ավտոմատ անջատիչի փոխարինում 80Ա	հատ	52800
59	Ավտոմատ անջատիչի փոխարինում 100Ա	հատ	55000
60	Մագնիսական թողարկիչի փոխարինում՝ առաջին եզրաչափ	հատ	33000
61	Մագնիսական թողարկիչի փոխարինում՝ երկրորդ եզրաչափ	հատ	38500
62	Մագնիսական թողարկիչի փոխարինում՝ երրորդ եզրաչափ	հատ	41800
63	Շարժական սայլակի ամբարձիչի տակդիրի նորոգում	հատ	4950
64	Ծայրային անջատիչի հենարանի փոխարինում	հատ	8000
65	2,2 ԿՎտ 750 պտ/րոպե շարժիչի փոխարինում	հատ	70000
66	Ճուպանի հետադարձ հենարանով փոկանիվի փոխարինում	հատ	35000
67	Հենարանով առանցքակալի կարճ լիսեռի փոխարինում	հատ	10000
68	Հենարանով առանցքակալի երկար լիսեռի փոխարինում	հատ	18000
69	Սայլակի անիվի մեկ առանցքակալի փոխարինում	հատ	6000
70	Սայլակի անիվի ձգման մեկ մանեկի փոխարինում	հատ	2500
71	Անիվի ձգման մեկ լիսեռի փոխարինում	հատ	10000
72	Արգելակման համակարգի մեկ կոճղակի փոխարինում	հատ	5000
73	1,5 ԿՎտ, 950 պտ/րոպե շարժիչի արգելակման թմբուկի փոխարինում	հատ	15000
74	2,2 ԿՎտ, 750 պտ/րոպե շարժիչի արգելակման թմբուկի փոխարինում	հատ	22000
75	7,5 ԿՎտ, 1450 պտ/րոպե շարժիչի արգելակման թմբուկի փոխարինում	հատ	35000
76	5,5 ԿՎտ, 1450 պտ/րոպե շարժիչի արգելակման թմբուկի փոխարինում	հատ	40000
77	7,5 ԿՎտ, 1450 պտ/րոպե շարժիչի արգելակման համակարգի փոխարինում	հատ	40000
78	5,5 ԿՎտ, 1450 պտ/րոպե շարժիչի արգելակման համակարգի փոխարինում	հատ	80000
79	7,5 ԿՎտ, 1450 պտ/րոպե շարժիչի արգելակման համակարգի մեկ փաթույթի փոխարինում, 380Վ	հատ	80000
80	5,5 ԿՎտ, 1450 պտ/րոպե շարժիչի արգելակման համակարգի մեկ փաթույթի փոխարինում, 380 Վ	հատ	32000

81	Շարժաբերի տեղադրման բետոնապատման աշխատանքներ, 1 մ <sup>3</sup> հաշվարկով	մ3	35000
82	Երթուղային զծերի ուղղման աշխատանքներ, 1 գմ հաշվարկով	գմ	3000
83	Շարժաբերի կափարիչի փոխարինում	հատ	28000
84	Շարժաբերի ձգման հենարանի և հեղյուսիփոխարինում	հատ	8000
85	Տանկային ուղեգծի սայլակի փոխարինում	հատ	290000
86	Տանկային ուղեգծի սայլակի ամբարձիչի տակդիրի պատրաստում	հատ	15000
	Ընդամենը՝		3044545


Հավելված N 2  
N ԳՀԾՁԲ-21-2/2-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ\*


չ/հ	Գնման առարկայի անվանումը	CPV կոդը	«ՀՀ դրամ»		
			Նախատեսվում է ֆինանսավորել 2021թ. ըստ նոստայակների, բայց ոչ ուշ, քան 20.12.2021թ., ընդ դրամ՝		
			2-րդ	3-րդ	4-րդ
1	Ամբարձիչների նորոգում (Թիրախային ամբարձիչ ՈՒՄՈՒ-Ս-127-ի նորոգում)	50891000/1	8500000	17000000	25000000
2	Ամբարձիչների նորոգում (Թիրախային ամբարձիչ ՈՒՄՈՒ-S-127-ի նորոգում)	50891000/2	3500000	7000000	10000000
3	Ամբարձիչների նորոգում (Թիրախային ամբարձիչներ ՌՀԿ նորոգում)	50891000/3	10000000	20000000	29660000
4	Շարժական կայանքների նորոգում (Շարժական կայանքների նորոգում)	50891300/1	6700000	13400000	20000000

\* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են անողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ  
«ՀՀ պաշտպանության նախարարություն»  
«ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ»

  
Ս. ԽԱՎԱԿՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ  
«Գենկոն» ՍՊԸ  
Տնօրեն



Պայմանագրի կողմ  
\_\_\_\_\_

գտնվելու վայրը \_\_\_\_\_  
հհ \_\_\_\_\_  
հվհհ \_\_\_\_\_

Պատվիրատու  
\_\_\_\_\_

գտնվելու վայրը \_\_\_\_\_  
հհ \_\_\_\_\_  
հվհհ \_\_\_\_\_

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N  
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ  
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«    » «    » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «    » «    » 20 թ.

Պայմանագրի համարը՝ \_\_\_\_\_

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «    » «    » 20 թ. դրությամբ գրված N \_\_\_\_\_ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատուցված ծառայությունների բանական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթացակարգ /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն  
\_\_\_\_\_

ազգանուն, անուն  
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն  
\_\_\_\_\_

ազգանուն, անուն  
Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ \_\_\_\_\_-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և \_\_\_\_\_-ի  
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. \_\_\_\_\_-ին կնքված N \_\_\_\_\_  
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

զեման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. \_\_\_\_\_-ին հանձնման-ընդունման  
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

\_\_\_\_\_  
ազգանուն, անուն

\_\_\_\_\_  
ստորագրություն

**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

\_\_\_\_\_  
ազգանուն, անուն

\_\_\_\_\_  
ստորագրություն